



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ թիվ 64

15 մայիսի 2012 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012
ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին Հայաստանի
Հանրապետության օրենքի 33 հոդվածի 3-րդ կետով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. 2012 թվականի բյուջեի 01.1.1.51 դասակարգման (ապարատի պահպանման ծախսեր) 4264 (տրանսպորտային նյութեր) հոդվածի 4-րդ եռամսյակից 200000 (երկու հարյուր հազար) դրամ տեղափոխել 2-րդ եռամսյակ:
2. Համապատասխանաբար բյուջեի վարչական մասի եկամտային մասի 7136 հոդվածի (գույքահարկ փոխադրամիջոցներից) 4-րդ եռամսյակից 200000 (երկու հարյուր հազար) դրամ տեղափոխել 2-րդ եռամսյակ:
3. 09.5.1.51 դասակարգման (արվեստի դպրոցի պահպանման ծախսեր) 4239 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածից պակասեցնել 100000 (մեկ հարյուր հազար) դրամ, 4269 (հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածից՝ 400000 (չորս հարյուր հազար) դրամ:
4. Համայնքի բյուջեի պահուստային ֆոնդին ավելացնել 500000 (հինգ հարյուր հազար) դրամ:
5. Գլխավոր մասնագետ հաշվապահ Ա. Սաղաթեյանին.
Նախահաշիվների և ժամանակացույցների մեջ կատարել նշված փոփոխությունները:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ